

ԻՆՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ: Առանձին համարները 3 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միջինը, ինքնադրաման մէջ:

Օտարաբարաբացիք դիտում են ուղղակի Բագրատ. Բաճախի, Մուսուս:

Ինքնադրամանը լայն է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից):

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Մեր յարուցած խնդիրը:—Ներքին տեսուչութիւն: Առանձնաբանական հոգաբարձուի շրջաբերականը: Նամակ Սիւնիկի: Նամակ Թմրազորին: Ներքին շտաբ:—Արտաքին տեսուչութիւն: Բոլորաբար: Սպանիա:—Մշակիչ շեռագիրներ:—Յայտարարութիւններ:—Բանասիրական: Բազումք մի ձեռագիր յիշատակարանից:

ՄԵՐ ՅԱՐՈՒՑԱԾ ԽՆԴԻՐԸ

Եթէ թիֆլիսը առանձին համակրութեամբ չէ վերաբերվում դէպի մեր յարուցած խնդիրը, թէ հայերը ինչ կրօնի և պատկանէին պէտք է ազգութեամբ մի լինեն,—այդ մեզ շատ չէ զարմացնում և չէ վրդովեցնում, որովհետեւ թիֆլիսի պէս անշարժ, առաջադիմութեան թըշնամի քաղաք հազիւ թէ մի ուրիշը կը գտնվի ամբողջ Անդրկովկասում: Բայց մենք կատարելապէս վարձատրված ենք համարում մեզ որ մեր յարուցած մտքին գաւառները համակրում են: Ամեն օր մենք ստանում ենք բազմաթիւ թէ թղթակցութիւններ, թէ մասնաւոր նամակներ, որոնք մեծ համակրութիւն են յայտնում մեզ մեր յայտնած մտքերի համար:

Այդ նամակներից մի շատ

փոքրիկ մասը տպվում են «Մշակի» մէջ և մեծ մասամբ նրանք են տպվում, որոնց հեղինակները կամենում են տպագրութեամբ յայտնել իրանց իսկական ազգանունները: Միաները թէև չեն կամենում լրագրի մէջ տպագրել իրանց իսկական ստորագրութիւնը, բայց հարկաւոր ժամանակ պատրաստ են յայտնել իրանց ազգանունները:

Համակրուց մեզ գրում են որ այդ քաղաքի հայ-լուսաւորչականները և հայ-աւետարանականները սկսեցին վերջին ժամանակները մեծ սիրով վերաբերվել դէպի միմեանց և հաստատ դիտաւորութիւն ունեն ձեռք ձեռքի ստուած ընթանալ, միասին և համերաշխութեամբ գործել ամեն ազգային գործերում:

Վերջապէս մեր քարոզած սկզբունքները արձագանք գտան և Վ. Պօլսում: Վաղը կը տպենք մեր լրագրի բանասիրական բաժնում մեր Վ. Պօլսի մշտական թղթակցի, Հայկակի նամակը, որի մէջ նա, ուրիշ նիւթերի վրա խօսելով, յայտնում

է և այն միաբեր, թէ այժմ, երբ թիֆլիսի հայերը իրանց հայրենիքի բարենորոգման գործի աջողվելու համար պէտք է սպասեն օտար պետութիւններից օգնութիւն, այսինքն կաթօլիկ բողոքական և այլ դաւանութիւններին պատկանող ազգերից, վերին աստիճանի անբաղաքազիտութիւն է լուսաւորչականների կողմից, եթէ նրանք նոյն իսկ այդ ժամանակ սկսեն հայածել այլակրօն հայերին, մերժել նրանց մասնակցութիւնը ազգային գործերում, հերքել նրանց իրաւունքը ազգային մարմին պատկանելու, վերջապէս գրեն յօդուածներ նրանց դէմ: Կովկասեան հայոց մամուլի բոլոր յօդուածները այժմ թարգմանվում են Վ. Պօլսի դեսպանատներում, մասնաւոր անգլիական դեսպանատան մէջ, աւելացնում է մեր թղթակցը, և թիֆլիսում հրատարակված թշնամական յօդուածները բողոքական և կաթօլիկ հայերի դէմ մեծ ցաւ պատճառեցին Վ. Պօլսի հայերին, ասում է նա:

Այդ բաւական չէ: Հայկակը

բերում է իր նամակի մէջ հայասեր Բրայսի խօսքերը, որ այժմ Վ. Պօլսումն է և որ ասել է Վ. Պօլսի հայ պատգամաւորութեանը, թէ հայերը մեծ մասով լուսաւորչականներից բաղկացած լինելով, այնու ամենայնիւ չը պէտք է թշնամական կերպով վերաբերվեն դէպի իրանց ազգի փոքրամասնութիւնը, դէպի կաթօլիկ և բողոքական հայերը, որովհետեւ դրանով կապացուցանեն իրանց քաղաքական հարձ տպաւորութիւն գործած կը լինեն Եւրօպայի վրա իրանց այդ կրօնական անհամբերողութեամբ:

Պորան մենք մեր կողմից ոչինչ չունենք աւելացնելու: Վաղվայ համարում կը տպենք Հայկակի նամակը և կը թողնենք ընթերցողների դատողութեանը թէ որքան անբաղաքազէտ և իրանց պաշտօնին անպատրաստ, որքան յանցաւոր են այն խմբագիրները, որոնք քաղաքական գիտութեան տարրական հմուտութիւններից էլ զուրկ լինելով, յանդգնում են քաղաքական

Բ Ա Ն Ս Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԲԱՆՈՒԾԻ ՄԻ ՁԵՆԱԳԻՐ ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Գ.

«Որովհետեւ միանգամ լսել սկսար, պէտք է համբերութիւն ունենաս: Մարդ իւր տեսածովը, լսածովը ու զգացածներովն է մարդ. հոգին իւր յիշատակներովն է սնանկում. միտք և դատողութիւնը պարզա ժամերում վեր են կրում նոյն յիշատակները իրենց թագաւորէն, և քննելով ու փորձելով օգտակարն ու պատշաճը տարբարում են իրենց: Ներողամիտ եղիլ մի օրինակ բերել, ձմեռը, տաք դրում, առաւօտեան դարմանը կուշտ փորով կերած, ջուր լսմած, տկները աւելուած չորացուած և խուչիկն ցանուած, էրք պառկում էին իմ եղանակ խաղաղ լուսնեան մէջ և զեղեցիկ արևիկը փոքրիկ երդիկներէն ներս մտած իւր անուշ ու ջնջիկ լուսովը ժպտում էր այդ անմեղութեան դարձրի մէջ, անձայն քայլով մտնում էի և կրնակա մի սիւնի դէմ տուած՝ կամ մարմնի մէկի մէջ նստած՝ անտրտում էի զուարճանալ առօքինի առաւօտներու երջանկութեան պատկերովը, և դիտում էի թէ ինչպէս նոքա մի խուլ գուլագուլու անկող իրենց խոչափողը մէջ յետ էին բերում քնքարները իրենց միանգամ կերածը և որսում էին, այսինքն մանր ծամում էին և լորձաքններովը զաւաւսար շարուելով կուլ էին տալիս. այդ այդ որոճմունքի շնորհն է նոքա մարմնի գիրութիւնը, զեղեցիկութիւնը, ուժը: Այդ որոճն ու

մարդունը նման են. ճեղհանքի մէջ զանազանութիւնն այն է, որ կենդանին իւր մարմնովն է պարարտանում, զեղեցիկանում, ուժաւորվում. իսկ մարդուն՝ բնաւորութիւնն է կազմվում, զպայմանէն է դրոշմ առնում, ձգտումն է ուղղութիւն ստանում: Եթէ ես քեզ իմ տեսածներու, լսածներու, զգացածներու վրա երկար բռնում եմ, նպատակ է քեզ ցոյց տալ այն տարիքը՝ որով կազմվելն է աւել իմ բարոյական մարդու, հոգի: Այլպէս ինչպէս ճանաչեցնենք քեզ իմ բուն: Նրկու զգացմունք իշխում են ինձանում. սիրում եմ իմ արևուն ասում եմ իւր թշնամին, և այդ երկու զգացմունքը դրոշմելու աւել և տարբարել են ինձանում՝ տեսածու, լսածու և զգացածու: Ներողութիւն, դառնաք մեր բանին:

«Թէպէտ քաղցրումն էի, դու չես տեսել այն մի հողաթաղ, շաղաղածիկ և աղմկաւալ քաղաք, եթէ արտաքինէն ներքինը պիտի դատէք, դատեցէք մեծ կայսերն յաջողող իշխաններու յատկութիւնը: Այնքան դարեր է իշխում են, երկու զեղեցիկ քար իրար վրա չեն դրած Արտաշէսներու և Սմբատներու երկրին մէջ, երկու ծաղիկ իրար մօտ չեն բուսեցնէ, շատ դեղեցիկ քարեր իրարմէ քանդած, շատ ծաղիկներ ապակեանած ու չորացուած են. եթէ երբէք քարի են երեցած իրենց չը պատակներուն, այդ նոքա իրենց թող զգալու արդիւնքն է եղել, երբ ուժով են եղել, միշտ բռնաւոր են եղել, և միշտ ապակեանել:

«Մի դաղանի երկիւղ սողոստում էր երակներու մէջ երբ Ալլասի աղօթաւորի բարակ ու տխուր ձայնը լսում էի և աչքերս վեր ուղղելով տեսնում էի սրածայր բարձր բարձրութեան վրա սպիտա-

կազուխ մարդը, ձեռքը ծնօտին, իւր օդի մէջ ցըցուած սրնի շուրջը դանդաղ պտտան անկիւս: Երբ, տան և մէկ տարեկան երեխայ, ծածուկ չարութէն չուկայն, ուր լայն միջնու է, անցնում էի և աչքիս ծայրով նայում էի այն կամար ու սպիտակ մօրուքներուն, որ իրենց բարձրաստակ խանութներու մէջ թաղարի կամ մանրակ մօտ ծայուած նստած, և այն աչքերով ջննում էին ինձ, վախենում էի և շտապեցնում էի քայլ, ինչպէս մէկը որ գիշերուայ սև միջով անց է կենում դեղինգանացի մօտով և Լարձում է թէ անցա ճիւղ մտնելներու ուրուները կը հասնին ետևէն ու կը բռնեն իրեն: Վախենում էի նաև, երբ պայծառ արևով անցնում էի կրակներու առջևն, և լիժ երեսով պատանները ծպտում էին՝ նայելով ինձ: Վերջապէս վախեցայ մէկ օր, որ մի նոյն փողոցով անցկենայիս, ուր այն լուրիկ մարդու ճոտ չը կար, յանկարծ մեծ մարդարէի թռուներէն մէկը մի դուն շուրս պրծնելով ճանապարհս կտրեց ասելով «Տի մեր տունն երթանք, քորս քեզ կուրենում: Աչքս այս այն կողմ դարձուցի, ոչ քչի երևում. գիտէի որ փողոցի դուրսն աղբիւր կայ, և այնտեղ շրտարներն անպակաս են. ձայն արձակելու վրա էի երբ մի պատուհան բացուեցաւ և մի շայ աղջկայ դուրս երևաց, որ արևի նման զեղեցիկ թռեցաւ ինձ այն պահուն: Ինք արհամարհ: «Տեսաներես մէկն ևս ազգեց ինձ, բայց սա ոչ երկիւղ այլ դարմանք: Տեսայ մէկ օր է ինչպէս, բարակ և կակուղ վարդը ձեռքը, ոտակաւորութեան մարդ էր թէ ինչ բանի չը գիտեմ, առջը խառնած մի նախիր կին, ոմանք զեղեցիկանան էր յիշատակում մէջ փաթաթուած, այլք տամա

տամա ծածկոցներու, վարում էր չը գիտեմ սր: Մինչ այդպէս հայածվում էին նոքա, տեսնում էի միւս կողմում թէ ինչպէս այն կախարդող հուսիներէն մէկ երկուսը իրենք կախարդվում էին իրենց եղբայրներու. գորտուկ ցոյց տուած կամար խնձորներէն կարմիր թաղիկներու ծայր կապուած, և նոքա ետեւից քաջկամ էին դէպի անկիւնները:

«Այդպէս էի տեսնում այն մարդիկը, որ նրստած են մեր ուսերուն:

«Հայաստանի աշուճը կարճ է, ձմեռն երկայն ու խիստ. երբ բուքն արձակ արձակ կուր է, երբ մանր ու ասղի նման ծակիկող ձիւնն աչք, քիթ ու բերան լցնում է, երբ քիւն ու բերնէն կլած շունքը սքանչելի այլախոսութեամբ բերեղ է դառնում և սիւնակ սիւնակ կախվում ընթացի ու մօրուքի վրայն, երբ տամուկ զիւրթը քիւն է մնում աչքի մէջ ապակի կտրիկ, կեանքը ժողովում է, գիւղի մէջ տաք գոմերում, ինչպէս պատանցի, քաղաքի մէջ խանութում, թաղարի շուրջը, ուր ձեռները ծոցում և ոտները տակը փաթաթուած նրստած է արևելեան վաճառականը. իսկ տեսնում դառած ձերտներն և պառաւ կիւր, անթխած և յաճախ քողածածուկ հարմերը, զեղաբաններ և ճիւղտակատեսիլ թռուները ակըբուած են մեծ թաղարի բուրբը, ուր մոխրի տակ անթխուած կայծը իւր ճշտալից ու գողորիկ ջերմութիւնը սողակեցնում է կենսատեսիլ անդամներու մէջ, լեղուները բացվում են գրոցներու կամ ընտանեկան անուշ խօսակցութեան. հարսը ծաղը կամ անեղը մասներու մէջ ունի, կամ երկիւղին, երբ ընտանեքը լիւ է, երեսաց կրակարանի մէջ բալուտ փայտը իւր կարմիր շանթերն արձակելով ճարձամամբ հրա-

Թերթեր հրատարակել, չեն կըշ-  
ուում երբէք իրանց ասածը, յա-  
փշտակվում են անձնական ան-  
սանձ կրքերով, մոլորեցնում են  
ժողովուրդը, գրգռում են նրա  
կորստաբեր մոլեռանդութեան ըզ-  
գացմունքը, շողջորթում են ժո-  
ղովրդի ստոր կրքերին իրանց  
գործը ժամանակաւորապէս ա-  
ջողեցնելու համար, քաղում են  
իրանց բոլոր պուրլիցիստական  
հմուտութիւնները ամբողջի սղի-  
տութեան, մոլեռանդութեան և  
նախապաշարմունքի պղտոր և  
մահաբեր աղբիւրից, զոչում են  
իրանց ազգի ընդհանուր շահերը,  
ընդհանուր ինտերէսները իրանց  
անձնական հաճոյքին, զոչում  
են ճշմարտութիւնը իրանց թըշ-  
նամական անյազ և անսանձ ըզ-  
գացմունքը դէպի մի անձնաւո-  
րութիւն բաւականացնելու գի-  
տաւորութեամբ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄԱՐԱՆԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ ՇՐՋԱԲԵՐ ԿԱՆԸ

«Պատկազ» լրագրի մէջ կարդում ենք հե-  
տեակաբար «Պատկասեան ուսումնարանական շրջ-  
ջանի վերաբերեալ շրջաբերականի» մէջ Ծ 8  
մէջ գտանք հետեակաւ կարգադրութիւնը,  
որ վերաբերում է երկրի մէջ տեղական լե-  
զուների ուսումնարաններին:

Գիմնադիւանների, պրօզիմնադիւանների և  
բէական ուսումնարանների կանոնադրու-  
թիւնները Պոլկասեան ուսումնարանական  
շրջանի մէջ գործադրելու մասին 1873  
թուին նոյնիմանի 22-ին Բարձրագոյն հաս-  
տատված կանոնների 4-դ յօդուածը իրա-

ւորում է նոյն երանիկ շրջանը իւր մօտ. մէկի հը-  
գոր միւսի մեղքէ մոռի նման աղիւս ու փափուկ  
մասնները Չերմութիւն ինդրելու համար երկարվում  
են դէպի հօրը, որի անուշ փայլը լուսաւորում է  
սորա արական դէմքը, միւսի մրայօն գեղապեայ  
լուսի պէս սիրուն երեսը, մանկիկի դուարի ուն  
գլուխը խոպոպ մազերով ու վարդ շրթունքով:  
Շուրջը ամեն բան ճեղուտութիւն և աննաշտութիւն  
է բոլորում. համեստ սենեակը, այն անմեղութեան  
հարմարութեամբ, մտքը է և կոկիկ յարգարուած.  
տախտակամած յատակը փոփածը ունի կամ գոր-  
դը կամ կապերը, պատերու տակ, կրակարանի  
երկու կողմէն սկսուած, պարզուած են կակուղ  
բաւտեանները և սոցա վրա շարուած են մէկ զըլ-  
խէն մինչև միւսը՝ բարձրը, որոնց վրա իրենց  
բարձրութեան մինչև կէսը վերի կողմանէ՝ քա-  
ղած է իրեն շապիկ սպիտակ ու գեղամալուր  
կտաւը: Նազելի մօր արկղէն, ուր ամիտուած են  
իւր և իւր ամուսնու և ճիշտակ մանկան սօճուտ  
աւուր՝ դանաւոր գարեղէնը, ծաւալում է անու-  
շահատ խնձորի և մեխակի բոլոր: Աստղադական  
է այդ բնակարանը, այդ ձևուտայ բնակարանը:

Ո՞՞, մտածող ես, երևակայութիւնը վնաս է. իւր  
լեռնակապ շրթաններէն արձակուած շուռ ու սու-  
րում է Հիւսիսակը, Բօրէաղը. դրսի դուան ծերայե-  
րու մէջ ողբեր է նուազում. երբում են նորա ազ-  
գեցութեան տակ ապակիները. ամենայն արարած  
կենդանի լուս է չորս դեզը՝ միայն դուցէ դրոտմը  
անտիբական շունն է կաղկանձում. պղինձն ու  
սաչանը տան մէջ թրթուածը ձայն են հանում,  
կամ սխալ գանգում է եկեղեցու արտարակի վը-  
րայի պղնձը. սենեակից մէջ մի մտղական դաւա-

ւունք է տալիս ցանկացողներին տեղական  
լեզուները սովորել: Այդ հիման վրա Կոլ-  
կասի գիմնադիւանների, պրօզիմնադիւանների և  
բէական ուսումնարանների մէջ առանձին  
վարձատրութեամբ (300 ր. մինչև 500 ր.  
տարեկը իւրաքանչիւր լեզուի համար) հրա-  
ւիրվում են տեղական լեզուների ուսուցիչներ,  
բայց այդ լեզուները սովորել ցանկացողները  
շատ քիչ են լինում և նրանք էլ միայն  
տեղացիներ:

Ի նկատի ունենալով, որ տեղական լե-  
զուների գիտեսար չափազանց անհրաժեշտ  
է այստեղ ապրող ուսանողի համար, մանա-  
ւանդ դատաստանական, վարչական և պօ-  
լիցիական հիմնարկութիւնների մէջ ծառա-  
յոյնների համար, ուսումնարանական հոգա-  
բարձուն կարելի է համարում 1873 թ.  
նոյնիմանի 22-ի վերոյիշեալ կանոնների 4-դ  
յօդուածը լրացնել հետեակաբար. ուսուցիչներ  
նիւնների որդեկրանցից իւրաքանչիւրը, որ  
արքունական հաշուով պանսիօն է մտնում,  
պարտաւոր է ուսումնարանի մէջ աւանդ-  
վող տեղական լեզուներից մէկը սովորել:  
Հոգաբարձուի կարծիքով անբնական չի լինի,  
եթէ կտաւարութիւնը, ուսուցիչներին իր  
որդեկրանցը միջոց տալով գիմնադիւանական  
ուսումը անկարճ ստանալ կը պարտաւորեցնէ  
նրանց որդեկրանց մի քանի պայմաններով  
արքունական ձրի կրթութեան փոխարէն,  
միւսնոյն ժամանակ այնպիսի պայմաններով,  
որոնց իրազօրեւելը գլխաւորապէս օգուտ կը  
տայ նոյն իսկ աշակերտներին: Որովհետև  
այժմ ուսուցիչներին որդիք բաւական  
մեծ քանակութեամբ կանդիդատներ են ար-  
քունական հաշուով պանսիօններ մտնելու  
համար, այսինքն. Քիշիլիսի գիմնադիւանում  
20 վահանային 101 կանդիդատ, Քուլթա-  
յիսի գիմնադիւանում 10-ին 18, Բագուի  
բէական ուսումնարանում 5-ին 30, Տեմիր-  
իւան-Շուրայի պրօզիմնադիւանում 15-ին 34  
է միայն երևանի պրօզիմնադիւանում 4 վա-  
հանային 2 կանդիդատ, ուրեմն այս ա-  
ռաջարկութիւնը իրագործելու համար, կա-  
րելի էր ընդունել հետեակաւ կանոնը. ուսու-  
կանդիդատներից իւրաքանչիւրը, որ ցանկա-  
նում է վերոյիշեալ հիմնարկութիւնների  
պանսիօնների մէջ բացված վահանային ստա-  
նայ, պէտք է պարտաւորվի, քանի որ ար-  
քունական հաշուով կը մնայ ուսումնարանի մէջ  
ուսումնարանի ուրիշ առարկաների թուում

զանի իշխանութեան ներքոյ ես, թաղուած ես մի  
խոր որոճմունքի մէջ. Աստուած գիտէ ուր են թը-  
ուել երևակայութեանը, ինչ ոլորտներու մէջ պոյտ  
են անուս...»

Սյուսեղ խօսակիցս ողետութիւնը չը կարողա-  
նալով բունը բացառանքից. — Ո՞, չայոց ձմեռ, կա-  
խանրդ ես, կախանրդ:—Նրեւը նայեցի. աչքերը խո-  
շորցել էին, և նշոյլ էին արձակում աղամանի  
նման:

Ձմեռը տեսմ էր. իւր պատանքը միջազար  
թանձրութեամբ լուսել էր այն դաշտի երեսը,  
ուր Նիրատ սառնեղէն լեզուով կարկանդակ ու  
պայտանձած էլ չէ խօսում իւր շարժումներու մէջ  
քաղաքի նեղ փողոցներու մէջ ձիւնը լեռնանման  
դիզացել է. ակնայ պէտք է բանալ անցողաբար  
անելու համար. տանուտէրը կամ տան պատա-  
ւորը անուտ անուտ թին ձեւը՝ մեծ ձեւեղե-  
րութեամբ ու տանջանքով դրսի դուան առջև բանդ  
եղած ձնի շիւղը պէտք է կտրէ երևուտը ազատ  
անելու համար: Նրը անուտուտայ այդ ժիրափը  
շարժումը դադարում է, երբ ժամուտը գնում է  
աղօթքի տունն ու յետ է դալիս, երբ խանութը նա-  
խաձաշն արած քաղվում է իր գործին, փողոցները  
դարձեալ անապատանում են, լուսութիւնը սիրում  
է. ներսի կենսիքը նշան վառարանի ծուխն է դըր-  
սուումը: Բայց մի փոքրիկ շարժում դարձեալ կայ  
փողոցում. այն մատաղատի մանուկներն են, որ  
վիշ, ակնով, քիթ ու բերան իրենց ձուր շարժի փա-  
թաթած, ոտ ու ձեռ. լուս ամբողջացած, գնում են  
այս այն կողմ. իւրաքանչիւրը իւր վարպետի մօտ  
կարգաւ է գնում...  
«Նիրատէս արևի ջերմիկ համբոյններով լուծել

սովորել նոյնպէս և աւանդված տեղական լեզուն,  
հակառակ դէպքում՝ նա պէտք է հանվի կան-  
գիդանների ցուցակները:

Պոլկասեան ուսումնարանական հոգաբար-  
ձուի վերոյիշեալ առաջարկութիւնները հա-  
ւանութիւն ստացան և հաստատվեցան  
Նորին Բարձրութեան Պոլկասեան փոխարքա-  
յից:

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

26 սեպտեմբերի

Սղնախից դէպի հիւսիս, 30 վերստ հեռաւո-  
րութեամբ, գտնվում է Վէլիսցիլիս գիւղը, մօտ  
350 տուն հայերով և համարեն նոյնքան վրացի-  
ներով, կան և քանի մի տուն հրէայք: Այս գիւղը  
երևելի է իր այգիներով, որոնցից տարէնը մօտ  
20.000 բուբուր գինի կարող է արտադրել: Ժո-  
ղովուրդի մեծ մասը թէև հարուստ են, բայց սը-  
րանք էլ վրաստանցի այլ հայերի պէս անտարբեր  
են դէպի ազգային գործերը: Մինչև այսօր չունեն  
ուսումնարան, թէև մօտ 5 տարի է, որ ուսու-  
մարանի շինութեան կապալը յանձնել են մի պա-  
րոնի, որ պէտք է շատ կարճ միջոցում պատրաս-  
տեր այն: Բայց չը նայելով, որ նա փողը վաղուց  
ստացած ունի ժողովրդից, այսու ամենայնիւ մինչև  
այսօր անկատար է մնացած շինութիւնը և սրա  
վրա ուշադրութիւն դարձնող էլ չը կայ: Այս  
պատճառով հայերի դաւաններից շատերը ուսա-  
նում են նոյն գիւղի վրայ քահանայի մօտ, իսկ  
շատերն էլ թափաւում են աննպատակ... Եւ ահա  
այս գիւղը, որ իր հարստութիւնով կարող էր մեծ  
դեր խաղալ դատարարութեան գործի մէջ, այս  
օր ժողովրդի անտարբերութիւնից շատ յետ է  
մնացել... Գիւղի տեղի դրութիւնը հարթ է, փո-  
ղոցները անապուր են, օրը ամառը բաւականին  
չոք է լինում, և ջուրը հեռու տեղիցն են բերում,  
որ յաճախակի ցամաքում է: Հայերը ունեն մի  
եկեղեցի և 2 քահանայ, իսկ վրացիք, 1 եկեղեցի և  
մի քահանայ: Գիւղից 5 վերստ հեռու գտնվում է  
Ալազան գետը, որտեղից թէև ժողովուրդը չեղ-  
տութեամբ կարող էր դէպի գիւղը ջուր բերել,  
բայց բոլորովին հոգ չեն տանում այդ մասին:  
Ալազանը ծառայում է ինչպէս լուս ճաշ ուտելու  
տեղ, ինչպէս կարելի էր միշտ թարմ ձիւնը ու-  
նենայ: Եւ խորհուրդ կը տայի (այստեղի «ՆԱԲ-  
ԵՆՅԷ» լրագրի կարգադրութիւնի, հայերէն լրագրի  
ստացող չը կայ) կարգաւ նոյն լրագրի 253 հա-  
մարը և օրինակ առնել կոյս Մանեայ Լօրիս-Մէ-  
լիբանից, որ իր սեփական ծախսով Որնակ գիւղի  
բնակիչների համար 250 սաճէն հեռաւորութիւ-  
նից ջուր է բերել տուել:

\*\*\*

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐԻՆ

Շուշի, 25 սեպտեմբերի

Ձեր պատուական լրագրի մէջ նորերս լուր էր  
հաղորդած մեր Շուշի քաղաքից, թէ այստեղի  
պարոցների վարժապետներից մէկը շաքար և թէլ  
է ընդունել աշակերտները, որ հարցաքննութիւն-  
ների ժամանակ լաւ թուանդանների արժանացնէ  
նոցա:

Ձեզ ի հարկէ անայտ չի լինի, թէ այստեղ կան  
չորս պարոցներ, ուր որ հարցաքննութիւններին  
թուանդաններ են դրվում, այն է՝ արքունական քա-  
ղաքային, ուսուցիչ օրիորդական, չայոց թեմական  
պարոցն ու սորա բաժին՝ օրիորդաց ազգային—  
հօգևոր չայոց դպրոց:—Փոյլ տուեցէք վերոյիշեալ  
արտաի դէմ պաշտպանել մի այն այն պարոցները,  
որոնց մասին որ երաշխատը լինել կարող են:

Իբրև ներկայացուցիչ վերջին երկու ուսումնա-  
րաններին, ես յանձնարարութիւն ունեմ իմ պաշտո-  
նակից ուսուցիչ ընկերների կողմից յայտնելու, և  
անձամբ վկայում եմ, թէ շուշիցի մեր ուսում-  
նարանները այնքան յարգում են, որ չեն մտազա-  
նայ կաշառներով արտատարել մեր և նոցա փո-  
խարձը բարի յարաբերութիւնները:—Ուստի խն-  
դրեմ ձեր թղթակիցից, որ կամ հաստատէ կամ  
ժխտէ այս իմ յայտարարութիւնը՝ ինչ մասով որ  
իմ տեսլութեան յանձնված ուսումնարաններն է  
վերաբերվում:

Պէտք է մի դաւառական քաղաքում ապրել, որ  
հասկանալի լինի, թէ ո՞րքան կարևոր է այսպիսի  
հերքումը, որպէս զի հիւանդ հարկերը ժամանակ  
չունենայ իր արարող առողջի վրա հեշտակել:

Տեսուչ թեմական դպրանոցի՝ Ս. Մանյիկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՂՈՒԲԱԼՅՈՅ մեղ գրում են թէ այն կողմերում  
շատ գիւղեր կան, որոնց բնակիչները մի ժամա-  
նակ ազդուութեամբ չայ են եղել, իսկ այժմ իրանց  
թուրք են համարում: Իրանց թուրքանալու պատ-  
ճառն այն է եղել, ինչպէս պատմում են, որ ազ-  
գային լեզուի գործածութիւնը թողնելով, սկսել  
են թուրքերէն խօսել, և չեղուցեալ խառնվել են  
թուրքերի հետ և ջնջվել են իսպառ նրանց մէջ,  
հետանալով չայութիները: Այս տեսակ գիւղերից  
նշանաւոր են երկուսը. Խաչաւուր և Քիլիվար, որոնց  
բնակիչները մի բառ անգամ չայերէն չը գիտեն  
և խօսում են թուրքերէն լեզուով: Բայց այնու ա-  
մենայնիւ չայոց կրօնը դեռ պահպանվել է այդ  
ազգայնականութեան մէջ, նրանք ունեն իրանց ե-  
կեղեցիներ և մի քանի քահանաներ, որոնցից միշտ  
օրինակ փոխանակ մէկ կնոջ, բացարձակ կերպով  
երկու կին է պահում մասնատականների նման:

Ստացանք 150 բուբուր յօդուած թիւրքաց Հայաս-

Նիրատէս մեղ թողցի իւր ջրերը կտրելու անցնելու  
Արևի հետ սաստիկ գրկախառնուածքի մէջ իւր ու-  
սուցիկ ծոցի գործութիւնը նուազել էր: Ռէմ է ինք  
գրել դէպ այն գիւղը որ Արմաթի է կոչվում: Նոյն  
օրը հասանք: Ձերմուկ ունի, բարեխառն ատա-  
ճանի, և մի կնոսի վրա մի շինաւորց մատու-  
նի մի անգամ, լուս միտ չէ, պատարագի ձայն է  
լսվում իւր լեռայ ու այրիաջալ կամարէն, Լուս-  
սաւորչայ չը գիտեմ որ մէկ սօճին. ինքը մատու-  
կուսաւորչայ յիշատակն է կրում, կամ կարծեմ  
Լուսաւորչայն է ինձ ասացին:

— Այս բաներն ես, սիրելի բարեկամս, յիշատա-  
կով եմ ասում. տանն և մէկ տարեկան ժամանակ  
տեսել ու լսել եմ, և հիմա երեսներորդիս՝ պատ-  
մում եմ զեղ. ուրեմն եթէ իրձ ունենաւ մի օր  
այս բաները քննելու ստուգելու, և իմ ասածները  
թերի կամ սխալ գտես, ներող եղիւր բարեկամիս  
որ ոչ իբրև գիտնական է ճանդիտանում ու գիտ-  
նական հետազոտութիւններ զեզ հաղորդում, այլ  
իւր մանկութեան ուշքն ու միտքը գրաւող բաներ  
յիշողութեան միջնորդութեամբ զեզ գրուցում  
այնպէս ինչպէս որ իրեն թուում է տեսած լինել  
և լսած:

«Երաշտակութեան մէջ կենդանի է մնացել այն  
որ Չերմուկի մէջ լողանալիս կանանց բերնին լուս  
եմ, թէ Չերմուկը իւր շապակտ օճն ունի, արդար  
և բարեբաւ, որի ապարանքը նոյն այն ջրի մէջ է  
և թէ եթէ նա առողջութիւն ինդրող կնոջ մէջ  
փաթաթվի՝ սորա տկարութիւնը կը վերնայ: Այս  
որ այդ բանը միտքս է ընկնում, միշտ մի  
ենթադրութիւն էլ հետն է վազում ուղեղիս մէջ

տանի սովորաբար հետեւեալ անձինքները: Այլ շահագրգիռ Սօրոսն Ասատուանցի 50 ռուբլ, Կալաքալաքցի Ստեփան Ասատուանցի 50 ռուբլ, Չարաթըրցի Սարգիս Տէր-Յրիկորեանցի 25 ռուբլ, և Կալաքալաքցի Յարութիւն Յարութիւնանցի 25 ռուբլ:

Քանի մի տիրացուներ քաջանայ ձեռնարկելու համար երկար ժամանակ աղաչելուց յետոյ հոգեւոր կառավարութեանը, տեսնում են, որ առանց յայտնի եզրահանակը տալու երբէք իրենց նպատակին չը պիտի ձանձնեն, ուստի պարտք են վերաճնում սովորաբար փողեր և տանում են մի եպիսկոպոսին: Ի չարիք սրբազանը իսկոյն ձեռնարկում է ամենին, բայց դեռ ժողովուրդ չէ տալիս այդ նորընծաներին չօվելու համար: Նորընծայ քաջանաները տարիներով սպասում են ժողովուրդ հովուելու նշանակած տեղը ուղարկվելու համար, բայց այդ խնդիրը դեռ մնում է անկատար, իսկ պարտատէրերը նորընծաներից պահանջում են փողեր: Շատ սպասելուց յետոյ յուսազատ դրութեան մէջ դիմում են նորից սրբազանին խնդրելով, որ յետ առջ իրանց փողերը, որովհետև պատասխանը ներում են, իսկ իրանք, եթէ կարելի է յետ կը տան սրբազանից ստացած քաջանայութիւնը, ու կերթան երկրագործութիւն կանխել, որով կարող են պարտքից ազատվել: Բայց սրբազանը յետ առջ չէ ուզում և այսպէս նորընծայ քաջանաները մնացել են շուտաւրեւ:

Յրկուշաբթի, հոկտեմբերի 13-ին լինելու է Արծրունու թատրոնում մեր հայ երաժիշտ-հեղինակի, պ. Կորգանովի կենդանու: Միտասարդ երաժիշտը ուսում է առել Ս. Պետերբուրգի և Լայպցիգի կոնսերվատորիաների մէջ, նա յայտնի ուսուցիչ էր Վրաստանի արտիստներին և ունի արդէն մի քանի գեղեցիկ հեղինակութիւններ, որոնցից «Տարախոյն» և «Նոստրադամոս» յայտնի են թիֆլիսեցիներին: Կարելի է շատեալ կարծել որ թատրոնը լի կը լինի և մեր թէ հայ և թէ վրացի չաւարակութիւնը կը շտապի գալ թատրոն, իր հայրենակցին, կովկասացուն, հային լսելու համար: Ինչ տեսակ համակրութեամբ մեր ճատարակութիւնը վերաբերվեց մի քանի ամիս սրանից առաջ դէպի իր հայրենակից պ. Կորիձէ, յոյս ունենք որ նոյն համակրութեամբ կը վերաբերվի նա և դէպի պ. Կորգանով:

Տեղական «Վոզվաս» ուսու լրագիրը նոր ձև է ընդունել, հետեւելով մի այլ լրագրի օրինակին, որ «Մշակի» երգուեստ թշնամի է: Նա սկսել է արտատպել «Մշակից» լուրեր, ըզուրաճներ, առանց «Մշակի» անունը յիշելու: Ինչ կատէր «Վոզվաս» եթէ մենք էլ նրանից լուրեր արտատպելով ասէինք. «ուսու լրագիրներից մինի մէջ կարգում ենք հետեւեալը»:

չը գիտեմ ուստի, թէ կարող է և ամուլ կանանց արգանքը բացուել, գոցել նոյն կանայք են ասել: Հաստատել չեմ համարձակուած: Կախարդական ազդեցութեամբ մի կ'եղնի ժամանակ մի ուրիշ առասպել է վեր վաղում մտքիս մէջ, յիշում եմ յուսանկան Աստուածը, որ այլ և այլ կերպարանք էր մշտնապէս գեղեցիկ կանանց կամ դիտրոսֆերու հետ խառնուելու, թէ ինչպէս մի օր վեր յիշուած շահագետի կերպարանքով գրկեց իւր տարիքածուն և նոր մէկով ձուլացուց իւր Որդիստը:

Վեր իմաստուն օճը կարող է այդ շնորհքն ունենալ երևակայողի համար: Մեր սիրտատարի պատանուսին քանի մի տարի բազմաձեւով մաշուելով դեռ չունի իւր սիրոյ պտուղը, և այց է ելնում այն տեղերուն, երբ ճակատն ու վարդ այտերը մարգարիտ ըզրտնած և կործքն ելեւէջ փափկիկ ոտով ելնում է սարն ի վեր, սուրբ մատուռի մէջ երկրպագութիւն անելու, երբ ակնանկիտ առուակի ափին դարձապարզ գետնի վրա նստած իւր սիրելիներու հետ՝ իւր համեստ և անործաշամ ճաշիկն է անում և անմահական ջրով իւր տապը բարեխառնում, երբ մեղմիկ զեփիւտի շնով որ կանանցներու վրայն անուշիկ թրթումամբ գալիս է իւր գողտրիկ կուրծքը կազդուրում, երբ անապակ օղի զեղատեսիլ ընտելան և ընդարձակ լուսամարտը երկնածրի շնորհքով իւր աչքերը ստացել են երկնային պայծառութիւն և հեղտ զգացումներու հօտը փայլելում է այնտեղ, երբ երկնային ջերմիկ ջրի մէջ իւր գեղաշն անգամները փափկացնում և ապա զով գիշերի լուսավառ աստղերու տակ անուշաղբ անկողնի ընդը քաշում մի մոգական զրկախառնուքի մէջ, կարծեմ այդ ժամանակ կարող է մի հրաշք գործուիլ, որի հեղինակն էլ իմաստուն օճը կարող է համարուիլ:

«Վօրու» լրագիրը նորերուն նուիրել է գրեթէ մի ամբողջ սիւն Գրիգոր Արծրունու «Սոյը թիւրքաց Հայաստանի մէջ» գիրմանակն բրոշուրի ընտելեանը:

Շնորհակալութեամբ ստացանք ՄՍՍԿՍՅՈՒՄ, Սուրինեանց քաջանայից հրատարակած գրքիկը «Այլ շահագրգիռ Սօրոսն Ասատուանցի, 1855-1880»:

«Վօրու» լրագրում կարգում ենք հետեւեալ հետաքրքիր տեղեկութիւնները Ռուսաստանում հրատարակող լրագրների թիւի վրա: Ռուսաստանում հրատարակվում են 608 շատ լրագիրներ, որոնցից 417 ուսուերէն լեզուով, 54 լեզական լեզուով, 40 գերմաներէն, 10 ֆրանսերէն, 11 լատիներէն, 7 էստոնեան լեզուով, 7 հայերէն լեզուով, 3 վրացերէն, 4 թուրքերէն, 3 լատիներէն, 2 ֆիններէն, 1 հրեարէն:

Քանակներից պ. Մկրտիչ Ալեկանցից ստացանք 3 ռուբլ յօդուս Վանի սովեալների:

Ստացանք ՓՊՅԻՅ, այնտեղի վաճառական և կոմիսիոներ պ. Պոպովից մի հեռագիր և մի նամակ, որով նա նուիրում է 2000 ռուբլ, որ մեզ պէտք է հասցնէ: Այդ գումարից 1000 ռուբլ յօդուս «Միացեալ ընկերութեան» է, իսկ 1000 յօդուս Վանի սովեալների:

**ԱՐՏԱՒԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

ԲՈՒԳՍԲՈՒՍ

Սօֆիայից «Polit. Couraz» լրագրին գրում են հետեւեալը սեպտեմբերի 19-ից: Թէպէտ բոլորական գինեորական միմիստը, գենիւլ էրնօստ, բոլոր միջոցները գործ է դրել հասարակական ապահովութիւնը պաշտպանելու համար, բայց այդ ապահովութեան համար դեռ ևս շատ բան պէտք է անել: Թէպէտ թիւրքաց խումբերի թիւը հեռուցեալէ փոքրանում է, բայց աւազակները առաջվայ պէս յանդուրժեամբ անկարգութիւններ են անում և շատ անգամ անպատիժ են մնում: Տրնօվի նահանգի մէջ ոչինչ ապահովութիւն չը կայ: Իստամբուլ գիւղի մօտ 120 թիւրքերից բաղկացած մի խումբ երևեցաւ, ո՞ համարձակվեցաւ գիւղերով յարձակվել նահանգի զիւսուոր քաղաքի վրա: Ժամադարմաների զիւսուորի արագ գործողութիւնների շնորհիւ աւազակների այդ խումբը վաղվեցաւ քաղաքից և չը

կարողացաւ նրան մեծ վնաս հասցնել: Այդ չէ կարող երաշխաւորել, որ խումբը նորից չի փորձի յարձակվել քաղաքի վրա և կողպուել ընակիչներին: 1888 թուին, Արիսի պատերազմի ժամանակ Ռուսաստան գաղթող բոլշարացիները այժմ վերադառնում են իրանց ազատված հայրենիքը: Նորերուն Ռուսաստանից վերադարձան Բոլշարիա 1200 ընտանիքներ, որոնց այնպիսի տեղեր ընակեցրին, որտեղ բոլշարական տարրը պակաս է: Այդ հանգամանքին մեծ նշանակութիւն են տալիս:

**ՍՊԱՆԻԱ**

Սպանիական լրագիրները հաղորդում են, որ Կորտեսների (սպանիական պարլամէնտի) համար լինելու ընտրութիւնները աչքի առջև ունելով, Կաստիլյոր դիտաւորութիւն ունի մի ճառ ասել Ալիսիայի ճաշկերութեան ժամանակ, որի նպատակը կը լինի միութիւն հաստատել Սպանիայի բոլոր աւանակութեան կուսակցութիւնների մէջ:

Սպանիական Իլաբէլյա նախկին թագուհին, ինչպէս հաղորդում են լրագիրները, պաշտօնապէս յայտնել է որ հրաժարվում է իր բոլոր անշարժ կալուածների իրաւունքից յօդուս իր որդիների, պահելով իր համար միմիսյն այդ կալուածներն արդիւնքի վայելելը քանի որ ինքը կենդանի է:

Լուր կայ, որ սպանիական կառավարութիւնը արգելել է Բասկեան նահանգում երգում տալ բասկեան բարբառով: Այսուհետեւ այդ նահանգում էլ երգուած պիտի արվի սպանիական լեզուով:

Մարիլից գրում են լրագիրներին, որ Սպանիան դիտաւորութիւն ունի ընդարձակել իր աւետարական յարաբերութիւնները Ասիայի հետ և այդ նպատակով հետեւելով եւրօպական այլ պետութիւնների օրինակին, պիտի նշանակէ Ասիայի մի քանի նշանաւոր կէտերում աւետարական հիւպատոսներին:

**«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐ**

ԲՈՒՌՈՒՍ, 3 հոկտեմբերի: Այբանական միութիւնը մերժեց Բիլա-Վաշայի պահանջը Դուլցինիոն խաղաղութեամբ շերտօզօրցիներին յանձնելու մասին և վճռեց պաշտպանել Դուլցինիոն: Բիլա-Վաշա յետ է քաշում իր

գործերը այբանցիների ընդգիմաղուութիւնը խանգարելու նպատակով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 հոկտեմբերի: Եղուց կոմս Լորիս-Մելիքով ուղևորվում է Լիվադիա «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է «Новое Время» լրագրին տուած է երկրորդ նախազուշուութիւն Մի ճաշի առիթով յօդուածի պատճառով, որ արպվեցաւ լրագրի № 1649 մէջ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 հոկտեմբերի: «Вестн.» լրագրին Հոօից հեռագրում են հոկտեմբերի 2-ից: Յունական թագուհին անձամբ յանձնեց պապին Քաղաւոր Կայսրի սեփական ձեռքով գրված մի նամակ:

ՏՈՒՆԻՍ, 2 հոկտեմբերի: Լեվանտիյի նաւատորմի մի բաժինը Վաղուլեայի ուղևորվեցաւ Պիլէյ:

ԼՕՆՈՍՏ, 3 հոկտեմբերի: Ստում են, որ կառավարութիւնը մտադիր է դատաստանել ենթարկել Իլլանդիայի հողային արտօջիսյի առաջնորդներին, որոնք մեղադրվում են դատարկութիւն կազմելու մէջ:

ԲԵՐԼԻՆ, 4 հոկտեմբերի: Պրուսական Սէյմը հրաւիրված է հոկտեմբերի 6-ին:

ԲԻՆՁԻՆ, 4 հոկտեմբերի: Ձերնօզօրիական գործերի զլլաւոր հրամանատար Բօժօ Պետրովիչ բանակ կազմեց Սուտորինի մօտ Բօժօ Պետրովիչ իր հետ ունի իշխանի գվարդիան և բազմաթիւ կանօնաւոր գործեր:

ՊԻՏԵՐԲՈՒՐԳ, 4 հոկտեմբերի: Աւստրիական պատուաւոր թարգմանիչը և նրա ամուսնից սեպտեմբերի 30-ին սպանվեցան տեղացիներին ձեռքով: Աւստրիական հիւպատոսը Պիլլ լինելով մէջ Վալդարդ յետ է կանչված իր կառավարութիւնից: Քննութիւն է նշանակված:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 հոկտեմբերի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է երէկ հոկտեմբերի 4-ին Նորին Բարձրութիւն Քաղաւորական, Քաղաժառանգուհին իրանց երեսխաներով Միխայիլ և Կսէնիա Այլ շահագրգիռներ, և կոմս Լորիս-Մելիքով ուղևորվեցան Լիվադիա: Կոմս Լորիս-Մելիքովի բացակայութեան ժամանակ միմիստութեան դործերը կը կառավարէ ներքին գործերի միմիստրի օգնական Կոխաւով:

ԽԱՐԿՈՎ, 4 հոկտեմբերի: Այսօր բացվեցաւ Ռուսաստանի հարաւային մասի լեռնային արդիւնաբերողների հինգերորդ ժողովը:

**ԽՈՐԱԳԻՐ—հրատարակող ԳԻՊՈՐ ԱՐԴՐՈՒՆԻ**

դնում: Հաւատում եմ որ մի օր իրաց կարող փոխուի, որ Աւուճն ու Եղը մէկ մարքի վրա յարգ ուտեն. բայց այսօր հարկաւոր է Հզօր լինել անվտանգ ապրելու համար: Արդարն ևս այդ գլխով պիտի իւր յաղթանակը կանգնէ, կարծեմ այդպէս էլ անում է: Արդար է ցանկալը որ այդ օրերը բարւոյ համար գործ դրուի. բայց ում կը համոզեն որ ինքը հարն է գործում. ամեն մարդ իւր այսպէս կամ այնպէս գործելու արդարացուցիչ փաստերը ծագումն ունի. այն էլ մեծ բան է որ սխալուած լինել երբեմն խոստովանի: Մեր կարծիքները տարբեր են. դործելու օրէնք չենք կարող տալ իրար, բայց եթէ սիրոյ կամ համանուն շահի շնորհիւ, և կամ վերջապէս բռնութեամբ զպատակեցնելով. բայց որովհետև Սէրը, Շաքը, Բնաւութիւնը մեր բնութեան յեղեղուկ պայմանով Փոփոխական, Անկայուն, Անցողական են, դոյն բաղդին է ենթարկուած նաև մեր Համաձայնեթիւնը: Այս թոհօսէն \*) ելնելու համար հաւատով և յուսով, այո և գործելով, պիտի սպասենք մի Սրանիկ ժամանակի, որի Շրջանը ս զիտէ քանի դարեր վերջն է երևնալու:

Մինչև այդ, ես պատասխանեցի, համբերութիւնս հատած, վայ գայ բարակ մանողին: Այ, մի կը սիրեմ Սուրս, Ձիւս, Անձս, Բարեկամս: Մնացածը թող Ստեղծողը իւր նախանաւութեամբ կառավարէ ինչպէս կուզէ, ինձ էլ նոյնա զետ:

\*) Քառաս:

\* Իլլան:

\*) Կարգան, կուրկի, կուռնի:

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կենտրոնական Գրադատական օրգանը հրատարակում է հետևյալ օրերս լայն տեսանքով Ստեփանոս առաջ քաշանայ Տէր-Ստեփանեանցի աշխատասիրած «Սկզբունք քրիստոնէական ուղղափառ հասարակաց հայտնանեաց եկեղեցւոյ» գրասարքի երկրորդ ապարութիւնը հետեւեալ յաւելումներով. համար. 11. Յակոբ Նահապետի որդիքը. 12. Յովսէփ բանտում. 13. Յովսէփի փառքը. 14. Յովսէփի եղբայրները դաշխ են նկարագրու. 15. Յովսէփի եղբայրների երկրորդ գաղութը նկարագրու. 16. Քէ ինչպէս եղբայրները ճանաչեցին Յովսէփին. 17. Յովսէփի նկարագրու տեղափոխուիլը:

Այս թիւի վրան թարգմանութիւն ընդհանուր քերականութիւն և էջմիածինն ի չորէն շարականները գրասարքում են իրանց տեղերում պատմութեան իմաստները համաձայն: Նկարագրութիւն ոտնալուայի հանդէսի ու թուարկութիւն ի պատիւ սրբոյ չորն մերոյ Գրիգորի Լուսաւորչի սահմանուած տօներէ: Գինը ըստ առաջնոյն 50 կոպէկ է:

Վերջապէս հարցմունքները, որոնք առաջին ապարութեան մէջ զետեղուած էին իւրաքանչիւր յօդուածի ներքոյ, այժմ ամփոփուեցան գրքերի վերջումը առանձնապէս:

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է նոյն գրավաճառանոցում «Նոր դասարկը թուարկութեան» Գ. Վարձեւանի, գինն է 70 կոպէկ:

	Բ.	Կ.
1. Ժողովրդական այբբենարան	—	5.
2. Տէր-Ն. Լուսինեան Մայրենի լեզու ա. տ.	—	35.
3. — — — Մայրենի լեզու բ. տ.	—	40.
4. — — — Մայրենի լեզու գ. և դ. տ.	—	70.
5. Աղայեանց ուսուցիչ Մայրենի լեզուի	—	15.
6. Ս. Մանուկեան Նահապետական և Հայր. աշխատ.	—	60.
7. — — — Աղայեանց ընտանեկան աշխարհ ա. տ.	—	25.
8. — — — Իւրեղանց. աշխարհ	—	30.
9. — — — Սղո. ու ընտան. աշխարհ ուսուցչաց ձեռնարկ	—	70.
10. Տէր-Վաթեան գրասարքը ա. ի. Русское Слово	—	45.
11. Ա. Վաթեան Գ. Ա. Ն. Նախակրթանք հ. լեզուի մ. ա.	—	40.
12. Եղիշէ, պատմութիւն Վարդանանց	—	1.
13. — — — Նոյն հասարակ կազմի վրա	—	20.
14: Տէր-Սարգսեան հայերէն վայելչարութեան օրինակ.	—	20.
15. Պարսաանեան Քերականութիւն Մայրենի լեզուի	—	50.

Վերջիցեալ գրքերի գինները «Վերջնական գրավաճառանոցից» նշանաւոր զինուան են ստանում:

Մի մօրթալցի պարոն, Յովհաննէս Եսաղաբեան, որ ՌՍՈՒՅԳՈՒԹԵԱՆ Վ.ԿԱՅԱԿԱՆ ունին Վեհափառ ԿԱՌՈՂԻԿՈՒԹՅԱՆ, ցանկանում է ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ և ԵԿԵՂԵՍՏԻԱՆ երեցեցողութեան ՌՍՈՒՅԳԻ պաշտօն ստանալ: Հասցէն. Թիֆլիսի հայոց կոնստաբուլի, հարցնել Յովհաննէս Եսաղաբեանին:

Ծախվում է մի ՏՈՒՆ ԱՅԳԻՈՎ ԵՒ ԲԱՎՈՎ 450 սած, մեծութեամբ. գանվում է ՎԵՍԱ, ԱՐՁԱՆԻ ԶԱՒ ԿՈՂՄԸ, բարձրութեան բա: Բացի այդ նոյն տեղը ծախվում է 1000 սած. ՀՈՂ միասին և մաս մաս:

ՎԱՐՁՈՎ է տրվում 6 ՍԵՆԱԿ ԽՈՀԱՆՈՒՑՈՎ, ՆԵՐՔԵԱՏՆՈՎ և այլ յարմարութիւններով: Մանաւանդ յարմար է ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար: Նորաշէնակայ փողոց, Իսակ ՓՈՒՂԻՆՈՎԻ տուն: Գին մասին կարելի է նոյն տեղը տեղեկանալ:

**Բ. Կ. ԵՆԿՈՎՂՈՎ**  
ԵՐԳԻՆԱԿԱՆ ԶԱՒԱՍԱՐՄԱՍԱՐ յայտնում է իր կլիենտներին, որ նա փոխեց իր հին ԲՆԱԿԱՐԱՆԸ և այժմ բնակվում է Երեւանակայ փողոցի վրա, տուն Ալեկսանդր Բարնասովի № 12:

ԱՆԳՂԻՍՏԱՆԻ ԽԱՆՈՒԹԻ Մէջ ստացվեցաւ ՇՕ4ՈՒՂԻ ԵՒ ԿԱԿՈՍ ՅՐԱՅ

ՎԱՐՁՈՎ տրվում է ՉՈՐՍ սենեակից բաղկացած մի բակարան, խոհանոցով և ներքնատանով Օրբէլեանի փողոցի վրա № 4, ներքին յարկում, Յակոբ Գանդուբովի տան:

Հայոց պատմութիւնը իսկական աղբիւրներից ուսուցնասիրելու համար կարեւոր մի դիրք «Տիւսոււածք բանից նախնի պատմագրաց հայոց» Յ հատոր, աշխատաս. Կ. Կոստանտնուպոլիս:

Ա. հատորը բովանդակում է Արշակունեաց թագաւորութեան անկման և Վարդանանց ու Վահանանց պատերազմների մանրամասն պատմութիւնը ժամանակակից պատմիչների խօսքերով հիւսած գրաբար:

Բ. հատորը բովանդակում է նոյն պատմութիւնը աշխարհաբար, որ ա. հատորի ճիշտ թարգմանութիւնն է:

Գ. հատորը բովանդակում է ա. և բ. հատորների համար կարեւոր ծանօթութիւններ. ժամանակադրական աղիւսակներ յաւելումներ:

Վաճառվում են երեք հատորը միասին—3 ր. ա. և բ. հատորը միասին 2 ր. 25 կ., բ. և գ. հատորը միասին 2 ր. 25 կ.

Աղբային զգոյցների համար 10 օրինակից աւել առնողն 10% զեղուցն կը դրուին. զները համար դիմել—Սէքսանդրասով—Յովսէփ առաջ քաշանայ Կոստանտնուպոլիս.

Տիֆլիս—Վերջնական գրավաճառանոց:

Մտակալ—հայոց եկեղեցու երեցեփոխան պ. Մկրտչ. Փանեանցին:

ՎԱՐԻՒԿԱՎԱՍՏԱՆ ՕՂԻԻ գործարարաց հետ ՌԻՖԼԻՍՈՒՄ ՇԱՌԻ յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկսվեցին ծախվել ամենալաւ մարքոված ՕՂԻՆԵՐ հետեւեալ անուններով. ՍԵՂԱՆԻ, ԲԻՆԵՆԻ և ԲՈՒՄԵՌԻՆԻ: Տիշը ամանով արժէ 45 կ., առանց ամանի 38 կ., կէս շիշը 25 կ., առանց ամանի 20 կ., և, ամեն այլ տեսակ օղիներ առանձին ցուցակ ունեն: Մեծ քանակութեամբ առնողներին նշանաւոր զինուան է անվում: Օղիները պատրաստված են ամենալաւ հացի ՍՊԻՏԻՅ շաքի մարքոված օղութեամբ և իրան յատկութեամբ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ամենալաւ գործարանների մէջ պատրաստվածներից վատ չեն: Պ. պ. գնողների ուշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրա, որի արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է: Օղիների պահեստը գանվում է Միքայէլեան կամուրջի վրա, Յնտարանայա հիւրանոցի տակ, Լիստոյնսկու տանը, Վօրոնցովի արձանի դիմացը: 8—8 (2 շաբ.)

## ԲՈՒՇԿԱՆՈՅ

ՀԻՆԱՆԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՈՏՅԱՆ 9-ԻՅ ՄԻՆՁԵՒ 1 ՃԱՄԸ

Երկուշաբթի. Գալթրօնսկի կանանց և մանկաբարձական հիւանդ. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հ., Քիւլաբեանց խիւրուրդական և աչքերի հ., Շտեմբօրսկի վեներական և կաշու հ.:

Երեքշաբթի. Մինկելիչ խիւրուրդական հ.: Միրօշնիչէնկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Կրիզէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ.:

Չորեքշաբթի Լիսիցեվ ներքին հ., Շտեմբօրսկի վեներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Գալթրօնսկի մանկաբարձական և կանանց հ., Միրօշնիչէնկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Քիւլաբեանց սիլիլիս և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Մինկելիչ խիւրուրդական հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտեմբօրսկի և Աստուածատուրով ներքին և կաշու հ.:

Շաբաթ. Կրիզէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ.:

Առաջնաբայտ Օրբէլեան աղբատ հիւանդանոցի բժշկանոցի տոմսակով ընդունում է իր տանը ամենայն օր, ամենայն ժամանակ Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի ղեկավար Լիսիցեվ

## ПОСТУПИЛА ВЪ ТРОДАЖУ НОВАЯ ЯИГА. ЗАКОНЫ

### О ДУХОВНЫХЪ ЗАВѢЩАНІЯХЪ

Составилъ присяжный повѣрнный Г. В. Бергольдъ, съ поясненіемъ текста законовъ, и съ приложеніемъ подробныхъ буквальныхъ извлеченій изъ рѣшеній гражд. кас. деп. сената, состоявшихъ: съ 1867 г. по 1879 г. включительно, рѣшеній Общихъ Собраній Сената и Высочайше утвержденныхъ мѣстн. Госуд. Совѣта. Съ книгъ приложены постатейный указатель и алфавиты, облегчающіе пользование книгою.

Цена 3 р. 50 к., съ пересылкою 4 руб. Книгопродавцамъ обычная уступка, съладъ книги у издателя Г. Бергольдъ, въ Москвѣ, на Тверской въ домѣ Хомяковыхъ бывш. Пороховичкова, вл. № 16. Иностранцы могутъ обращаться во всё на и болѣе извѣстныхъ книжныхъ магазиновъ и къ издателю; выписывающіе книгу прямо отъ г. Бергольдъ, за пересылку не платятъ.

Ընդունում են ամեն տեսակ պատկերներ ԿՈՆՏԷՆՏՆԵՐԻ, ՊԵՐՈՒՆԻ, ՍՈՒԻՍԻ գանապան տեսակի, մուրաբի, և ընտիր տեսակ ՖՐՈՒԿՏՈՎԻ ԿՈՆՏԷՆՏԻ, և ամեն տեսակ կանդիտերի ապրանքի, ըստ մասնիկ գներով: Պատուէրներ կը կատարվեն ամեն ճշտութեամբ, և խոճմտաբար. ցանկացող կարող են դիմել ինձ հետեւեալ հասցեով. Въ Тифлисте, МАРТИРОСУ АХНАЗАРОВУ. НА СОЛОЛАКСКОЙ УЛИЦѢ, МАГАЗИНЪ ВАРШ ВСО АЯ ПЕКАРНЯ. Գիտատար կոնֆէկտ պահանջողների ճանապարհածախքը ինձ վրա եմ առնում.

Մ. Հաննապարանց. 20—50

## ՆՈՐ ՀՆՆԻՅՍ

ՖԻԼԻՊՕՎԻՉ ԵՒ ԸՆԿ. ԼՈՒՍԵՆԿԱՆԻ չորս ամսվայ գործունէութեան հետեւանքները: (Առանձնապէս լուսանկարի համար կառուցած շինութեան մէջ): Գօրովիսկի փողոց, տուն Կ. Լա. Չուբայովի, Թիֆլիսի կրուրդի մօտ: Բաց է ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 7 ժամը:

Գուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Կենտրոնական և Չ. Գրիգորեանցի գրականութիւնում Ս. Մանուկեանի հետեւեալ գրասարքերը. 1. Աղբային Ընտանեկան աշխարհ և Այբբենարան (առաւօտայ ուսուցիչ և ընթերցանութիւն) . . . 25 կ. 2. Նոյնը ուսուցիչների համար բացատրութիւններով հանդերձ) . . . . . 75 կ. 3. Աղբային Իւրեղանական աշխարհ (բ. տարուայ ուսուցիչ և ընթերցանութիւն) . . . . . 30 կ. 4. Նահապետական և հայերենի աշխարհ (գ. տարուայ ուսուցիչ և ընթերցանութիւն) (բ. ապագութիւն) . . . . . 65 կ.

Կ. ՊԵՆՏԵՐ, ԵՏԱՄԵՆՍԿԱՅԵ ՓՈՂՈՅ տուն ԶՈՒՐԵՎՈՎԻ: Եկող & մեղվայ սեղօնի համար առարկում են պատուէրի հասարակութեանը ՄԵՃՐԱՆԿԱՆՈՒԹԵԱՆԻ ԶԵՌԻ և ՈՏԻԿԱՐԻ ՄԵՐԵՆԵՆԵՐ, երօպական առաջնակարգ ԳՈՐԾԱՐԿՆԵՐԻՅ, ամենանոր ՉԵԼԵՐԻ, չափազանց ԷՃԵՆ գներով, այսինքն: Չեքի մեքենաներ 12—5 րուրը: Ուրբի 50—80 րուրը:

